Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

105011

891-99
(u-2)

185

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

891.99
Ч-21

91 99
-21

ԳՈՎԵՍ

Վասն Դաւիթ Գարեգեանի

1, Մայրաքաղաք Տփխիսում կայ մի կտրիճ պատուական,
Սօլօմոնեան Դաւիթ են ասում ազգաւ Գարեգեան,
Չկայ մէկ երիտասարդ որ լինէ համանման,
Ընդհանուր աշխարհի մէջ թէև շատ կայ ժրաջան,
Բայց մեր Հայկայ սերնդից սա է ջոկուած ախոյեան,
Համարելով ինձի պարտ այս պարոնին քանի բան,
Թոյլ գրչովս գրելու կարեացս չափ գովասան։

2, Սա Հայկազունը՝ երիտասարդ է ոչ պատանի,
Ով տեսանի պատկերը տալով հաղայր երանի,
Սկսում է ասել «թէ շատ պատուոյ է արժանի»,
Շապիկը նուրբ բեհեզից և հանդերձը ծիրանի,
Օրումս քիչ եմ տեսած այսպիսի մի գեղանի,
Քիչ է ծնած և քիչ էլ նորէն պէտք է ծնանի,
Հայցեմ պահէ Երկնային Տէրը սորան անսասան։

3 Քաջ բանաստեղծ Ռաֆֆիի սուր գրիչն գեղեցիկ,
Պէտք է որ նկարագրէ սորա կեանքը երջանիկ,
«Փունջեր» կապէ գոյնզգոյն և մեզ լինի մատուցիկ,
Դուրս է գալի նազելով դէպ 'ի փողոց անմեղիկ,
Հեզ ու խոհեմ բնութեամբ ինչպէս քնքուշ աղուընիկ,
Սերամարգից խիստ սիրուն, սոխակից բառն անուշիկ,
Ընկերական աշխարհումս լեզու ունի ճարտասան։

4, Ամենայն տեղ կ'խօսուի բարի անունը սրան,
Ամենին խնամատար ու գթութիւնը սրան,
Տարածուել է համբաւը մեծ յատկութիւնը սրան,
Բոլորովին վերացած է մթութիւնը սրան,
Պարոն երգիչ Զիւանն էլ թանգ կեցութիւնը սրան,
Տեսնելով պարզ ասել է ճշմարտութիւնը սրան,
«Գովելու արժանի է իմ Դաւիթը գովական։»

5, Զմայլելի հայուածքով գեղածիծաղ պատկերը,
Ցոյց է տալի շարունակ իւր մտերիմ ընկերը,
Թէև կամին թշնամիք խռովութեան ստուերը,
Վերահասի և պատէ ցերեկը և գիշերը,
Որով յագի իրենց վատ կրքոտ հոգւոյ ցոյցերը,
Բայց նա հոգով վառուում է ինչպէս սիրոյ լապտերը,
Ճշմարիտ սէր սիրելոյն ընծայել է անբաժան։

6, Սա մի գինետուն ունի մէկ համանման չ'կայ,
Պատանդ շատ զանազան անունով գաստինիցայ,
Ոչ Լօնդօնն է սորա պէս, և ոչ էլ Ամերիգայ,
Ոչ Պետերբուրգ, ոչ Փարիժ, ոչ Կովկազ, ոչ Եւրոպայ,
Ոչ կրուժօկ, ոչ կլուպ, ոչ սադ, ոչ վազ, Օդեսայ,
Վերջապէս սա կոչվում է մի թանկագին անթիկայ,
Ով հանդիպի կ'կարծէ, դրախտ է Եդեմական։

7, Տասն և հնգին Մայիսի մեր ՎԵՀ ԿԱՅՍԵՐ տօնն օծման,
Շատ թումաններ նա զոհեց իւր գրպանից սեպհական,
Գինետունը զարդարեց ամենաբարձր աստիճան,
Կանթեղներով ջահերով դրօշներ կերպաս բեհեզեան,
Անկեղծ կասեմ Թիֆլիսում չկար մի տեղ այս նման,
Պ. պրիստաւ, բազմութիւնք այս հանդիսին տես եկան,
Վստահ եմ որ չի մնար առանց ուշի նկատման։

8, Վերոյ յիշեալ Դաւիթից մէկ աղաղակ դուրս եկաւ,
Որ գոչեց «Հայր Երկնաւոր ինձ ի՞նչ վիճակ դուրս եկաւ»
«Ում բարեկամ ճանչցայ նա հակառակ դուրս եկաւ»
«Մինչ ծառայս էլ օձի պէս օղակ օղակ դուրս եկաւ»
«Բերնից լաւ խօսքի տեղեակ սուր և նիզակ դուրս եկաւ»
«Բայց իմ բոլոր թշնամիս խախք խայտառակ դուրս եկաւ»
«Փառք ստեղծող տիրոջս նա է միշտ ինձ պահապան»։

Երջանիկ օր խաղաղ կեանք, պարոն Դաւիթ Գարէտեան,
Քեզ մաղթում է 'ի սրտէ, երգիչ Խալեաթ Զահրիեան։

'Ի 20-ին Յունիսի 1883 ամի 'ի Տփխիս։

ԵՐԳԻՉ ԽԱՑԵԱԹԻ ԶԱՀՐԵԱՆ։

50576-ah

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Іюня 1883 г.

Типографія И. Мартиросіанца.

Գրադարան Гос. Библиотека ՀԱՅԿ-Հայ-СОР Մատենադարան Матенадаран
36018-66

26 Aug 83
578
241
1482

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

2003